

**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

քրեական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ

2020 թվականի փետրվարի 12

1. Շարունակվող հանցագործությունների հասկացության բացակայության մասով.

Նախագծի 7-րդ հոդվածի համաձայն. «1. Հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության, պատժի կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցների ենթարկելը կամ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը պետք է լինի արդարացի՝ ապահովելով ինչպես կիրառվող օրենսդրության, այնպես էլ պետական հակազդեցության համաչափությունը՝ կատարված հանցանքին, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը»:

Վերը նշված իրավանորմի տրամաբանությունը նախ և առաջ անձին պատասխանատվության ենթարկելիս վերջինիս կատարածի և կիրառվող օրենսդրության ու սպասվող քրեական պատասխանատվության համաչափության պահպանումն է:

Այս տեսանկյունից, շարունակվող հանցագործությունների գաղափարից հրաժարումը չի կարող նպաստել մեկ միասնական դիտավորության մեջ ընդգրկված, նույն օբյեկտի դեմ ոտնձգող, մի քանի արարքներից բաղկացած հանցագործությունների համար համաչափ քրեական պատասխանատվության ենթարկելուն, այն հաշվառմամբ, որ արդարացի համարվել չի կարող նշվածի համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելը՝ հանցագործությունների համակցության կանոնով:

Այսպես. պահեստապետն իր պահեստից առանձնապես խոշոր չափերի հասնող գույքը որոշում է հափշտակել մաս-մաս՝ յուրաքանչյուր անգամ գույքի մի մասը տեղափոխելով, ասենք՝ չորս տարբեր արարքներով: Ստացվում է, որ նույն աղբյուրից, նույն եղանակով, միևնույն անմիջական օբյեկտի դեմ ուղղված և ամենակարևորը մեկ միասնական դիտավորության մեջ ներառված արարքները կազմելու են տվյալ դեպքում չորս ինքնուրույն հանցակազմեր, ինչն արդարացված չէ, առնվազն, սուբյեկտիվ մեղսայնացման տեսանկյունից: Բանը նրանում է, որ ըստ էության, անձի նպատակը մեկ հանցագործության կատարումն է, պարզապես դրա օբյեկտիվ կողմը տեխնիկապես դրվատվում է չորս մասերի: Մեր կարծիքով, սա բնավ չի կարող պարունակել տարբեր հանցակազմեր և պետք է դիտվի իբրև մեկ հանցագործություն:

Կամ շորթողը արատավորող տեղեկությունը հրապարակելու սպառնալիքով միևնույն անձին կարող է մի քանի անգամ ներկայացնել իրեն գույք հանձնելու պահանջ:

Հետևապես, շարունակվող հանցագործության ինստիտուտն առավել որոշակի դարձնելու տեսանկյունից կարելի է առանձնացնել դրա հետևյալ հատկանիշները.

- միևնույն անմիջական օբյեկտ,
- միևնույն աղբյուր, (սեփականության դեմ ուղղված հանցագործություններում)
- միևնույն եղանակ,

➤ մեկ միասնական դիտավորության առկայությունը (ընդ որում, սա կարող է ծագել վաղորոք, կամ առաջին արարքը կատարելու ընթացքում):

Այս հատկանիշներից ելնելով կարելի է առաջարկել շարունակվող հանցագործության հետևյալ բնորոշումը.

«1. Շարունակվող հանցագործություն է համարվում անձի կողմից ինքնուրույն հանցակազմ պարունակող երկու կամ ավելի արարքների կատարումը, որոնք ուրնձգում են միևնույն անմիջական օբյեկտի դեմ, կատարվում են նույն եղանակով և ներառված են մեկ միասնական դիտավորության մեջ:

2. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում՝ շարունակվող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող երկու կամ ավելի արարքները պետք է կատարվեն նույն աղբյուրից:

Այդպիսի արարքները դիտվում են իբրև մեկ հանցագործություն

Շարունակվող հանցագործության կատարման ժամանակ է համարվում առաջին արարքը կատարելու ժամանակը:

Շարունակվող հանցագործությունն ավարտված է համարվում միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքն ավարտին հասցնելու պահին»:

Հատկանշական է նաև, որ Նախագծի 1-ին հոդվածի 22-րդ կետը սահմանում է տևող հանցագործության հասկացությունը, մինչդեռ՝ շարունակվող հանցագործության հասկացությունը բացակայում է:

2. «Խուլիգանական դրդումներ» հասկացության բացակայության մասով

«Խուլիգանական դրդումներ» եզրույթը Նախագծի մի շարք հոդվածներում օգտագործվում է որպես որակյալ հատկանիշ, սակայն դրա հասկացությունն օրենքում տրված չէ, ինչն իրավական որոշակիության տեսանկյունից կարող է առաջացնել այդ որակյալ հանցակազմերի որակման հետ կապված խնդիրներ: Ասվածն առավել հիմնավոր է դառնում այն տեսանկյունից, որ «շահադիտական դրդում» եզրույթի հասկացությունը օրենքում տրված է (1-ին հոդվածի 17-րդ կետում):

Գտնում ենք, որ վերը նշված եզրույթն օրենքում կարող է ունենալ հետևյալ բնորոշումը. **«Խուլիգանական դրդում՝ հասարակության մեջ ընդունված համակեցության կանոններին հակադրվելու, իր առավելությունն ընդգծելու, հասարակության այլ անդամներին իր նկատմամբ ստորոդասելու անձի մղում»:**

3. Պատիժ նշանակելու հետ կապված մի շարք խնդրահարույց հարցեր

Նախագծի 72-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն. «Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող երկու կամ ավելի հանգամանքների առկայության և պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող որևէ հանգամանքի բացակայության դեպքում նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատժատեսակի առավելագույն չափի կամ ժամկետի երկու երրորդից»:

Նախագծի 77-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Եթե դիտավորյալ հանցագործության համար նախկինում ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրած կամ կրող, դատվածություն ունեցող անձը կատարել է դիտավորյալ հանցանք, որի համար դատապարտվում է ազատազրկման, ապա նշանակվող նվազագույն պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով առավելագույն պատժի երկու երրորդից»:

Նշված երկու դրույթների համադրմամբ ստացվում է, որ եթե անձի արարքում առկա են պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող երկու կամ ավելի հանգամանքներ և պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող որևէ հանգամանք բացակայում է, իսկ սանկցիայում առկա է ազատազրկման ձևով պատիժ, ապա անձի նկատմամբ պատիժ է նշանակվելու ռեցիդիվ ունեցող անձի նկատմամբ պատիժ նշանակելու կանոններով:

Սա ոչ միայն չարդարացված մոտեցում է, այլ նաև նշված երկու իրավիճակներում նույն մեխանիզմով պատժի նշանակումը անհամաչափ մոտեցում է՝ վտանգավորության տարբեր մակարդակներ ունեցող իրավիճակների նկատմամբ:

Այսպես, ռեցիդիվ ունեցող անձի վտանգավորության աստիճանն արտահայտվում է այն բանում, որ անձի նկատմամբ ազատազրկման ձևով, դիտավորյալ հանցագործության համար նշանակված պատիժն ի զորու չի եղել ապահովել պատժի նպատակները և անձը կատարել է նոր դիտավորյալ հանցանք, որի համար իրեն սպառնում է ազատազրկման ձևով պատիժ:

Ինչ վերաբերվում է այն անձին, ում մոտ առկա են պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող երկու կամ ավելի հանգամանքներ, իսկ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող որևէ հանգամանք առկա չէ՝ կարող է պատիժ կրելու արդյունքում առհասարակ հետագայում ձեռնպահ մնալ հանցավոր արարքներ կատարելուց: Եվ կարծում ենք, անվիճելի է այն, որ առաջին անգամ հանցանք կատարած և ռեցիդիվ ունեցող անձանց վտանգավորություններն էապես տարբեր են: Հետևապես, այս երկու իրավիճակներում ռեցիդիվի կանոններով պատժի նշանակումը չի բխում պատժի նպատակներն իրացնելու՝ նախագծում նշված տրամաբանությունից:

Բացի այդ, հարկ է նշել, որ 72-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունն արդեն իսկ պատիժ նշանակելու հարցում էական սահմանափակում է նախատեսում սանկցիայում նախատեսված առավել մեղմ պատիժը նշանակելու արգելքի տեսքով:

Այսպիսով, առաջարկում ենք, 72-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը հանել:

Վերը նշվածից բացի, դատարանի՝ պատիժ նշանակելու հետ կապված հայեցողությունը վերացվել է նաև մի շարք դեպքերում. Նախագծի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե հանցագործությունը պայմանավորված է եղել հանցագործությունից տուժած անձի հակաիրավական վարքագծով կամ հանցանքը կատարվել է հարկադրանքի ազդեցությամբ կամ, եթե հանցանքը կատարվել է կյանքի ծանր հանգամանքների զուգորդմամբ, կամ առկա են երեք կամ ավելի օրենքով նախատեսված մեղմացնող հանգամանքներ, եթե նշվածներն այն աստիճան են

նվազեցրել անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, որ դատարանի համոզմամբ սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափը խիստ է տվյալ անձի համար, ինչպես նաև խմբի կողմից կատարված հանցանքի մասնակցի կողմից այդ խմբի հանցագործությունը բացահայտելուն աջակցելու դեպքում դատարանը կարող է նշանակել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից պակաս պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով կամ հոդվածի մասով»:

Իհարկե ողջունելի է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմքերի հստակեցման մասով Նախագծում որդեգրված մոտեցումը, սակայն գտնում ենք, որ դատարանն այս ինստիտուտը կիրառելիս, ինչպես նաև մի շարք այլ դեպքերում, պետք է ունենա ընդհանուր կանոնից շեղվելու հնարավորություն:

Այսպես, Նախագծի 72-րդ հոդվածի 1-ին մասում դատարանին հնարավորություն է ընձեռվել շեղվելու հոդվածում նշված պատիժ նշանակելու կանոնից, եթե վերջինս հիմնավորի իր որոշումը. «Եթե առկա են պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները և բացակայում են պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները, ապա այլընտրանքային սանկցիայի դեպքում դատարանը նշանակում է սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատժատեսակը: Եթե դատարանը, հաշվի առնելով հանցավորի անձնավորությունը, հիմնավորում է, որ սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատժատեսակ նշանակելը չի ապահովի պատժի նպատակների իրագործումը, ապա կարող է նշանակել սանկցիայով նախատեսված ավելի խիստ պատժատեսակ»:

Այսինքն, ի վնաս անձի դատարանն ունի կանոնից շեղվելու հնարավորություն, սակայն ի նպաստ որոշում կայացնելու հայեցողություն չունի:

Նույն սահմանափակումն առկա է նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտում: Նախագծի 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե դատարանը հանցանք կատարած անձի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկման կամ **առավելագույնը չորս տարի ժամկետով** ազատազրկման ձևով պատիժ նշանակելով հանգում է հետևության, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին»:

Գտնում ենք, որ դատարանը նշանակվելիք պատժի արդարացիության, ինչպես նաև պատժի անհատականացման սկզբունքն ապահովելու տեսանկյունից պետք է ունենա կանոնից շեղվելու հնարավորություն, եթե դատական ակտում հիմնավոր կերպով պատճառաբանի իր որոշումը:

Դատարանին նման հնարավորություն ընձեռելը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածի պահանջներից. «2. Օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին»:

Իսկ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն. «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

Դատարանին պատիժ նշանակելու ընդհանուր կանոնից ի նպաստ անձի շեղվելու հնարավորություն տալու առաջարկը բխում է նաև այն պարզ ճշմարտությունից, որ հնարավոր չէ օրենսգրքով սպառնիչ սահմանել բոլոր հնարավոր իրավիճակներն ու հիմքերը, երբ կատարված արարքին համաչափ պատիժ նշանակելու սահմանադրական պահանջն ապահովելու նպատակով դատարանը պետք է նշանակի ընդհանուր կանոնով նախատեսված պատժից առավել մեղմ պատիժ (պատժատեսակ, պատժաչափ):

Այսպիսով, գործում ենք, որ անձի նկատմամբ պատիժ նշանակելիս կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս, դատարանը պետք է ունենա ընդհանուր կանոնից շեղվելու հնարավորություն, եթե հիմնավորված կերպով պատճառաբանի իր որոշումը դատական ակտում:

4. Վաղեմության ժամկետների մասով

Նախագծի 86-րդ հոդվածի 2-ր մասի համաձայն. «Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից մինչև անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելը»:

Գտնում ենք, որ նշված առավել վաղ փուլում վաղեմության ժամկետների ընդհատումը չի կարող նպաստել ողջամիտ ժամկետներում քրեական գործերի քննությանը, բացի դա, սկիզբ կարող է դնել, վաղեմության ժամկետն ընդհատելու նպատակով քրեական հետապնդման մարմինների կողմից արհեստականորեն անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելու արատավոր պրակտիկային: Հաշվի առնելով գործնականում անձին որպես մեղադրյալ ներգրավելու պրակտիկան, այն, որ բազմաթիվ են դեպքերը, երբ այդպիսի որոշում է կայացվում ոչ թե բավարար ապացույցների համակցությամբ, այլ, օրինակ՝ մեկ ցուցմունքի առկայությամբ, ապա դժվար չէ պատկերացնել, վաղեմության ժամկետն ընդհատելու նպատակով անձին ապօրինի որպես մեղադրյալ ներգրավելու սպասվող պրակտիկան: Ուստի, վաղեմության ժամկետի ընդհատումը, հնարավոր չարաշահումների ռիսկերից խուսափելու նպատակով չպետք է պայմանավորված լինի քրեական վարույթն իրականացնող մարմնի կամքով և անձը չպետք է կրի վարույթ իրականացնող մարմնի դանդաղկոտության և քննության ոչ արդյունավետ լինելու բացասական հետևանքները:

Բացի այդ, պարզ չէ՝ ինչ հիմնավորմամբ, նախագծում շեշտակի բարձրացվել են վաղեմության ժամկետների շեմերը, ինչն արդեն իսկ զգալիորեն կրճատելու է վաղեմության ժամկետների կիրառման դեպքերը:

Անհասկանալի է նաև, օրինակ, ոչ մեծ ծանրության հանցանք կատարած, 5 տարի չբացահայտված, այդ ողջ ընթացքում իրավահպատակ վարքագիծ դրսևորած և 5-րդ տարին լրանալու վերջին օրը մեղադրանքի որոշմամբ վաղեմության ժամկետն

ընդհատված ու պատասխանատվության կանչված անձին ամեն գնով պատժելու նպատակահարմարությունն այն պայմաններում, երբ անձն այդ հինգ տարիների ընթացքում որևէ նոր հանցանք չի կատարել: Կամ, բնակարան ապօրինի մուտք գործած անձը, կամ մեկ այլ անձի նամակագրության գաղտնիությունը խախտած անձը, կամ ծառայության վայրից երեք օրով բացակայած զինծառայողը կամ ուրիշի գույքին անզգուշությամբ վնաս պատճառած անձը չի կարող զուտ այդ արարքից ելնելով համարվի հանրության համար վտանգ ներկայացնող, երբ արարքի կատարման պահից անցել է երկու տարուց ավելի, առավել ևս հինգ տարի:

Քանի որ վաղեմության ժամկետների շեմերի բարձրացման պայմաններում, չեզոքանում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահից, վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատելու անհրաժեշտությունը, առաջարկում ենք վաղեմության ժամկետների հաշվարկման առումով պահպանել գործող օրենսգրքի իրավակարգավորումը: 86-րդ հոդվածի 2-րդ մասն առաջարկում ենք վերախմբագրել հետևյալ կերպ. **«Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից մինչև մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը»:**

Սկզբունքորեն դեմ լինելով վաղեմության ժամկետների հաշվարկման առաջարկվող տարբերակին, որպես անհրաժեշտ նվազագույն այլընտրանք՝ առաջարկում ենք առանձին դեպքերում դատարանին լիազորություն վերապահել ցանկացած գործով դադարեցնել անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը՝ դրա նպատակահարմարության բացակայության հիմնավորմամբ: Այսինքն, դատարանը հաշվի առնելով դեպքի հանգամանքները, հանցագործության հետևանքները և այն կատարելուց հետո անցած ժամանակահատվածը, կարողանա համակարգային գնահատման ենթարկել անձին քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակահարմարությունը, և եթե հանգի այն հետևության, որ «արդարադատությունն» այնքան է ուշացել, որ կորցրել է իր նպատակը, ապա կարողանա նշված հիմնավորմամբ անձին ազատել քրեական պատասխանատվությունից և պատժից:

5. Նախագծի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին անգամ հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա արարքը նվազ վտանգավորության հետևանքով էական գույքային վնաս չի պատճառել անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության շահերին»:

Առաջարկվող փոփոխության համաձայն գործող օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառելիությունը խիստ ձևափոխվել և սահմանափակվել է՝ իր մեջ ներառելով միայն գույքային բնույթի վնասը, այդպիսով դուրս թողնելով այլ ոչ էական վնասներ ևս, որոնք նույնքան նվազ վտանգավորություն ունեն:

Օրենսդիրը գործող օրենքում այդ ինստիտուտը նախատեսելով, ապահովագրել էր քաղաքացիներին ձևական առումով հանցագործության հատկանիշներ պարունակող, սակայն հանրային վտանգավորություն չպարունակող արարքների համար քրեական պատասխանատվության ենթարկվելու վտանգից: Ստեղծել էր արդյունավետ գործիք քրեական հետապնդում իրականացնող մարմինների և դատարանի համար, որպեսզի

վերջիններս զերծ մնան հանրային վտանգավորություն չպարունակող արարքների համար մեղադրանքներ առաջադրելու և (կամ) մեղադրական դատական ակտեր կայացնելու վտանգից:

Ակնհայտ է, որ բազմաթիվ են այն դեպքերը, երբ անձի արարքն իսկապես ձևականորեն է պարունակում հանցագործության հատկանիշներ, սակայն որևէ քրեաիրավական պաշտպանության տակ գտնվող օբյեկտի էական վնաս չի պատճառել:

✓ Օրինակ՝ անձը Երևանից հասնելով Սյունիքի մարզում տեղակայված զորամասերից որևէ մեկը և ութ ժամ անցկացնելով ճանապարհին՝ տեսնում է, որ զորամասի հերթապահները տեղում չեն և կանգնած են զորամասի մուտքի շեմից մի քսան մետր դեպի զորամաս խորության վրա: Նա տեսնում է, որ զորամասի դարպասների վրա գրված է մուտքն արգելվում է, սակայն մուտքի դուռը բաց է, և որոշում է մուտք գործել, մոտենալ հերթապահներին, որպեսզի խնդրի տեսակցության կանչել այդ զորամասում ծառայող իր որդուն:

Ձևական առումով անձը կատարել է «Ձորամասի տարածք ապօրինի մուտք գործելու հանցակագործություն:» /**գործող օր. հոդված 327.6., նախագիծ՝** հոդված 440/

✓ Կամ օրինակ՝ զորավարժությունների ժամանակ բացարձակ գերազանցիկ քննությունը հանձնած զինծառայողը նշանակետին ինը փամփուշտ կրակելուց հետո ոգևորված տասներորդ փամփուշտը կրակում է օդ:

Ձևական առումով նա կատարում է ռազմամթերքի վատնում (ոչնչացում): /**տես գործող օր. հոդված 371-ի 1-ին մաս, նախագիծ՝** հոդված 490-ի 1-ին մաս/

✓ Կամ օրինակ կինը խանդի հողի վրա առանց ամուսնու համաձայնության բացում է նրան հասցեագրված այլ կնոջից եկած նամակը և կարդում այն:

Ձևական առումով նա կատարում է ուրիշի նամակագրության գաղտնիությունը խախտելու հանցագործություն /**տես գործող օր. 146-րդ հոդվածի 1-ին մաս, նախագիծ՝** հոդված 202-ի 1-ին մաս/

Արարքներ, որոնք ձևական առումով պարունակում են հանցագործության հատկանիշներ, սակայն որոնց համար քրեական հետապնդում իրականացնելը և առավել ևս անձին դատապարտելն առերևույթ չի բխում արդարադատության շահից, խախտում է մարդասիրության, արդարության սկզբունքները, դրանք կարող են հանդիպել հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում և դրանց միայն մի փոքր մասն է կրում գույքային բնույթ:

Ուստի գտնում ենք, որ նախագծի 82-րդ հոդվածը կարելի է շարադրել հետևյալ կերպ. «Առաջին անգամ հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա արարքը նվազ վտանգավորության հետևանքով էական գույքային վնաս չի պատճառել անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության շահերին:

Առաջին անգամ հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինը հիմնավորի, որ թեև անձի արարքը ձևականորեն պարունակում է հանցագործության

հատկանիշներ, սակայն նվազ վտանգավորության պատճառով էական վնաս չի պատճառել անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության շահերին»:

6. Որոշ քրեաիրավական հասկացությունների սահմանման անհրաժեշտության վերաբերյալ դիտարկումներ.

Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է նաև տալ այլ՝ քրեաիրավական ոլորտում օգտագործվող հասկացությունների սահմանումները: Այսպես, Նախագծով անհրաժեշտ է տալ քրեական իրավունքի տեսությունում համատարած կիրառություն ստացած հանցակազմի հատկանիշների՝ օբյեկտի, օբյեկտիվ կողմի, սուբյեկտիվ կողմի և սուբյեկտի սահմանումները: Այս հետևությունը պայմանավորված է մի քանի հանգամանքով: Մասնավորապես, ՀՀ Վճռաբեկ դատարանն ու ՀՀ Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի առանձին հանցակազմեր, հղում են կատարում հանցակազմի հատկանիշներին՝ հստակ նշելով, որ դրանք են օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը ու սուբյեկտիվ կողմ, սակայն այս սահմանումն իր օրենսդրական (ֆորմալ) ամրագրումը որևէ տեղ չի ստացել (միայն առանձին հոդվածներում են առկա հանցագործության սուբյեկտի, հատուկ սուբյեկտի, արարքին վերաբերող հասկացություններ), որի պայմաններում այս մարմինները, առանց հստակ մատնանշելու աղբյուրը, ուղղակի հղում են կատարում ընդհանուր տեսական մոտեցումներին, ինչը մեր կարծիքով չի բխում իրավական որոշակիության սկզբունքից: Բացի դրանից, Նախագծի 45-րդ հոդվածի 3-րդ մասում ավարտված դիտավորյալ հանցագործության սահմանումը տալիս Նախագիծն օգտագործում է «հանցակազմի բոլոր հատկանիշներ» արտահայտությունը կամ Նախագիծն օգտագործում է «երկրնտրելի օբյեկտիվ կողմ» տերմինը և այլն: Այս բոլոր տերմինների բովանդակության օրենսդրական ամրագրման բացակայության պայմաններում վերջիններիս բովանդակությունը բացահայտելու և գործնական կիրառման ընթացքում ծագող խնդիրների լուծման համար անհրաժեշտ կլինի դիմել տեսական աղբյուրների, որոնք ոչ միշտ են միանշանակ: Այսինքն՝ այս պարագայում վերոհիշյալ նորմերը չեն ապահովի անհրաժեշտ կանխատեսելիություն, ինչն իրավական որոշակիության պահանջի պարտադիր բաղադրատարրն է:

7. Նախագծի 39-րդ հոդվածում տեղ է գտել ՀՀ քրեական օրենսդրությանը նախկինում անձանոթ՝ քրեական պատասխանատվությունը բացառող նոր հանգամանք՝ սպորտային ռիսկը:

Նախագծում այս ինստիտուտի նախատեսումը թեև ողջունելի է, սակայն գտնում ենք, որ այս ինստիտուտում տեղ գտած դրույթները հստակեցման կարիք ունեն: Այսպես, Նախագծի 40-րդ հոդվածի համաձայն՝ տվյալ մարզատեսակի համար սահմանված կանոնները դիտավորությամբ խախտելու հետևանքով քրեական օրենքով պաշտպանվող շահերին դիտավորությամբ վնաս պատճառած անձը ենթակա է քրեական պատասխանատվության:

Նման ձևակերպումը կարող է հանգեցնել որոշակի կազուսային իրավիճակների, քանի որ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը կախվածության մեջ է դրվում պետության պատասխանատվությունից դուրս գործող կանոններից ու անհատներից: Օրինակ՝ ֆուտբոլային հանդիպումների ժամանակ խաղի կանոնների խախտումներն արձանագրում են մրցավարներն ու ֆուտբոլային ֆեդերացիաների համապատասխան պաշտոնյաները, որոնք պետության անունից հանդես չեն գալիս: Նման պայմաններում ստացվում է, որ անձը քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի, եթե այս մարմիններն արձանագրեն խաղի կանոնների խախտում, հակառակ պարագայում մարզիկներին դիտավորությամբ կամ անզգուշությամբ պատճառված վնասը դուրս է մնում քրեաիրավական ոլորտից: Խնդիրն ավելի է բարդանում, երբ հաշվի ենք առնում բոլոր հնարավոր մարզատեսակների բազմազանությունը: Այս պատճառաբանությամբ գտնում ենք, որ այս և մի շարք այլ դեպքերում խաղի կանոնները դիտավորությամբ խախտելը չի կարող հիմք հանդիսանալ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

8. Նախագծի 60-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տուգանքի կիրառմամբ գոյացած միջոցների հիսուն տոկոսն ուղղվում է հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման պետական հիմնադրամ: Այդ հիմնադրամից փոխհատուցում է կատարվում միայն ֆիզիկական անձանց, եթե հանցագործությամբ պատճառված վնասը չի հատուցվել:

Կարծում ենք, այս կարգավորումը խտրական է, քանի որ որևէ օբյեկտիվ հիմք առկա չէ հանցագործությունից տուժած ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև տարբերակված մոտեցում որդեգրելու համար, հետևապես, առաջարկում ենք հիմնադրամից փոխհատուցել նաև իրավաբանական անձանց հասցված վնասը:

Այս առումով պետք է որպես ելակետ ընդունել ՀՀ Սահմանադրության հոդված 74-ի կարգավորումն առ այն, որ հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

9. Կարծում ենք, որ Նախագիծը պետք է առանձին կարգավորում պարունակի ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի այն որոշումների վերաբերյալ, որոնք մեկնաբանում են ՀՀ քրեական օրենսգրքի որևէ հոդված կամ ինստիտուտ: Մասնավորապես, միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու համար անհրաժեշտ է նշել, թե այդ որոշումներից որոնք են շարունակելու իրենց գործողությունը, որոնք են մասնակի գործելու և որոնք են դադարեցնելու իրենց գործողությունը կամ հստակ սահմանել այնպիսի չափանիշներ, որոնք հնարավորություն կտան իրավակիրառ պրակտիկայում հստակ տարանջատել այդ որոշումներն ու դրանց գործողության ոլորտը:

Բացի դրանից, լրացուցիչ կարգավորման կարիք ունի նաև ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի նշանակման կանոնների (գումարում, հաշվարկում և հաշվակցում)

ու պատժի համակարգի համապատասխանեցումը Նախագծով ամրագրված պատժի նշանակման կանոններին ու համակարգին, քանի որ Նախագիծը գործողության մեջ դնելուց հետո, երբ կատարված հանցագործությունները համապատասխանեցվեն Նախագծին, ծագելու է նախկինում նշանակված պատիժները վերանայելու ու դրանք Նախագծին համապատասխանեցնելու անհրաժեշտություն, իսկ այդ պարագայում պետք է ամրագրված լինեն հստակ չափանիշներ, որպեսզի հնարավոր լինի ապահովել միասնական պրակտիկա ու բացառել ցանկացած խտրական մոտեցում:

Այս առումով կարծում ենք, որ անհրաժեշտ է նշում կատարել այն մասին, թե կալանքի դատապարտված անձինք, ովքեր դեռևս կրելու են պատիժը, արդյոք ազատվելու են պատժի կրումից, քանի որ բառացի մեկնաբանության արդյունքում այս պատժատեսակն ըստ էության այլևս գոյություն չունի, թե փոխարինվելու է կարճաժամկետ ազատազրկմամբ, կամ եթե պահպանվի տուգանքի Նախագծով առաջարկվող տարբերակը, ապա այն ինչպես է համապատասխանեցվելու փաստացի տուգանքի դատապարտված անձանց պատժի հետ կամ, այլ կերպ ասած, արդյոք այս առումով Նախագիծը պատիժը մեղմացնող օրենք է, թե՛ ոչ:

10. Նախագծի հոդված 194-ի ձևակերպման վերաբերյալ.

Նախագծում «շանտաժ» հասկացությունը հատուկ մասի հոդվածներում օգտագործվում է որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ:

Շանտաժը բնութագրվում է որպես որոշակի գործողություններ կատարելու (տեղեկություններ հրապարակելու կամ իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու) սպառնալիք: Այն բովանդակային առումով օգտագործվում է որպես անձի կամարտահայտության նկատմամբ հարկադրանքի միջոց: Նշվածն ակնառու է դառնում մի շարք նորմերի և հատկապես հոդված 175-ի բովանդակությունից. «Կնոջն իր հղիությունն արհեստական եղանակով ընդհատելուն կամ անձին իր վերարտադրողական ֆունկցիան դադարեցնելուն (ամլացման) հարկադրելը բռնություն գործադրելով, դա գործադրելու սպառնալիքով, շանտաժով կամ հարկադրանքի այլ եղանակով»:

«Շանտաժը» որպես հարկադրանքի միջոց հատուկ մասի նորմերում օգտագործվում է կամ որպես արարքի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ կամ ունի հիմնական հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշի դեր:

Ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ նախագծի հատուկ մասի յուրաքանչյուր նորմ, որտեղ շանտաժն օգտագործվում է որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, պաշտպանում է ոտնձգություններից որևէ կոնկրետ իրավունքի իրացման ազատություն, իսկ մի դեպքում՝ պետի կողմից իր պարտականության կատարման հնարավորությունը:

Եթե մյուս բոլոր նորմերում կարելի է ընդունելի համարել, որ ամեն դեպքում կիրառվող հարկադրանքը ոչ իրավաչափորեն ներազդում է անձի իրավունքների իրացման ազատությանը կամ պարտականությունների չկատարելուն, այսինքն ոչ իրավաչափ ազդեցություն է գործում տուժած անձի կամարտահայտությանը, ապա նույնը հնարավոր չէ պնդել հոդված 194-ի դեպքում: Մասնավորապես, նորմով առաջարկվում է քրեականացնել

(...) շանտաժի միջոցով մեկ ուրիշին որևէ արարք կատարելուն կամ դրա կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելը:

Խնդիրը կայանում է նրանում, որ շանտաժի հասկացության մեջ ներառված գործողություններից մի քանիսը՝ իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու սպառնալիքը, կարող են նաև ինքնին իրավաչափ լինել ավելին՝ իմպերատիվ պահանջ լինել: Զուգահեռաբար կարող է իրավաչափ լինել նաև սպառնալիքին ուղեկցող պահանջը: Օրինակ, երբ դասախոսը քննության ավարտին պահանջում է հանձնել գրավորները՝ սպառնալով հակառակ դեպքում չընդունել դրանք:

Այլ կերպ ասած, բազմաթիվ իրավիճակներում մեկ ուրիշին որևէ արարք կատարելուն կամ դրա կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելը կարող է լինել իրավաչափ:

Օրինակ, երբ բնակարանի վարձատուն պահանջում է վարձակալին վճարել վարձավճարը՝ սպառնալով հակառակ դեպքում չթույլատրել բնակվել իր տանը: Փաստացի վերջինս կատարում է շանտաժի հասկացության մեջ նկարագրված գործողությունը՝ սպառնալով զրկել վարձակալին իր տանը բնակվելու իրավունքից, և միաժամանակ փաստացի դրանով հարկադրում է վճարել վարձավճարը:

Ակնհայտ է, որ նկարագրված իրավիճակում վարձատուի արարքը չի կարող քրեորեն հետապնդելի համարվել, սակայն նախագծի վիճելի ձևակերպման պատճառով կարող է այդպիսի մեկնաբանման պատճառ դառնալ: Խնդիրն այն է, որ տվյալ իրավիճակում ոչ բարեխղճորեն իր պարտականությունները կատարող վարձակալին բնակարանում բնակվելու իրավունքից զրկելը և դրա սպառնալիքը իրավաչափ են:

Նույն կերպ, բոլոր այն դեպքերում, երբ հարկադրանքի կիրառումն իրավաչափ է, այն չի կարող քրեական հետապնդելի լինել:

Այստեղ կարող է հակափաստարկ լինել առ այն, որ այդ դեպքերում նախագծի հոդված 40-ի ուժով անձը ենթակա չի լինի քրեական պատասխանատվության: Մասնավորապես, հոդվածը սահմանում է, որ հանցագործություն չի համարվում օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելն այն անձի կողմից, ով կատարել է օրենքով կամ իրավական այլ ակտերով թույլատրվող արարք կամ օրենքով կամ իրավական այլ ակտերով իր վրա դրված պարտականություններ: Մինչդեռ **այդ դեպքում անհասկանալի է նախագծում 23 անգամ տեղ գտած «ապօրինաբար» եզրույթը, որն օգտագործվում է նույն գործողությունն օրինական կատարելը քրեականացնելը բացառելու համար:**

Մյուս կողմից, հակառակ մոտեցմամբ, ստացվում է, որ մենք որդեգրում ենք արարքը քրեականացնելու և այնուհետև դրա օրինական դեպքերը բացառելու սկզբունք, մինչդեռ, կարծում ենք, սկզբունքը պետք է լինի օրինական արարքներից քրեորեն պատժելի արարքներն առանձնացնելը:

Տվյալ դեպքում, կարծում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ որպես հարկադրանքի եղանակ է կիրառվում անձի, նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին կամ օրինական շահերին վնաս պատճառող, կամ անձի համար անցանկալի տեղեկություններ հրապարակելու սպառնալիքը, ապա անկախ նրանից, թե ինչ արարք կատարելուն կամ դրա կատարումից ձեռնպահ մնալուն է

վերաբերում խոսքը, և անկախ նրանից պահանջն իրավաչափ է, թե՛ ոչ, արարքը պետք քրեորեն հետապնդելի համարել:

Սակայն, այն դեպքերում, երբ որպես հարկադրանքի եղանակ է կիրառվում իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու սպառնալիքը, ապա այն քրեորեն հետապնդելի պետք է լինի բացառապես այն դեպքերում, երբ պահանջը, կամ իրավունքներից, ազատություններից զրկելը կամ դրանք սահմանափակելն իրավաչափ չեն:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ հոդված 194-ի ձևակերպումն անհրաժեշտ է վերանայել այնպես, որ անհարկի չքրեականացվեն այն դեպքերը, երբ և՛ իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու սպառնալիքը, և՛ դրան ուղեկցող պահանջն օրինական են:

11. Կարծում ենք, հոդված 201-ի նույն տրամաբանությամբ Նախագծի հոդված 200-ն (անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը) անհրաժեշտ է լրացնել ծանրացնող հանգամանքով՝ քրեական պատասխանատվություն սահմանելով նույն արարքի համար, որն անզգուշությամբ հանգեցրել է ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի, մարդու իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի սահմանափակման կամ այլ ծանր հետևանքի:

12. Նախագծի հոդվածի 377-ի 2-րդ մասի 7-րդ կետում և հոդված 388-ի 2-րդ մասի 2-րդ կետում որակյալ հատկանիշ է նախատեսված 1-ին մասով նախատեսված արարքի կատարումը ուսումնադաստիարակչական հաստատությունում կամ դրա **հարակից տարածքում**: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարակից տարածք ասվածը որոշակի չէ և կարող է որակման իմաստով առաջացնել խնդիրներ, առաջարկում ենք նշված հասկացությունը փոխարինվի «**դրա անմիջական հարևանությամբ**» հասկացությամբ, ինչպես նշված է նախագծի հոդված 387-ում, ինչն առավել որոշակի է թվում: Դրանով նաև կպահպանվի օրենսգրքի միասնականությունը ձևակերպումների առումով:

13. **Նախագծի 412-րդ հոդվածի մասով.**

Նախագծի 412-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում կաշառք տալու համար, միաժամանակ սահմանելով խրախուսական նորմ. կաշառք տվողը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդում իրականացնող մարմիններին կամ դատարանին և աջակցել է հանցագործությունը բացահայտելուն:

Հարկ ենք համարում նշել, որ տվյալ հանցագործության հանրային վտանգավորությունն առավել նվազ է, երբ կաշառք տվողը կաշառքը տալիս է ստացողի պահանջով և դրդմամբ: Հաճախ են դեպքերը, երբ կաշառք ստացողի պահանջով կաշառք չտալը կարող է հանգեցնել անձի կամ նրա մերձավորի կամ նրա խնամքի տակ գտնվող

անձի իրավունքների և օրինական շահերի ապօրինի սահմանափակման: Հարկ է նշել նաև, որ ներկայիս իրավակարգավորումներում խրախուսական նորմը կիրառելու պայմաններից մեկը հենց կաշառքի շորթումն է: Այլ կերպ ասած, կարող են լինել իրավիճակներ, երբ անձը հայտնվում է անելանելի վիճակում՝ տալ կաշառք կամ հակառակ դեպքում կանգնել իրավունքների ապօրինի սահմանափակման վտանգի առջև, որը ստեղծվել է կաշառք ստացողի «հարկադրանքի» արդյունքում: Հետևապես գտնում ենք, որ այդպիսի իրավիճակներում անձը պետք է անվերապահորեն ունենա քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն:

Ուստի՝ գտնում ենք, որ նախագծի հոդվածի 412-ի 4-րդ մասը հարկ է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Կաշառք տվողը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդում իրականացնող մարմիններին կամ դատարանին և աջակցել է հանցագործությունը բացահայտելուն:

Կաշառք տվողն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդում իրականացնող մարմիններին կամ դատարանին, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն և **եթե կաշառքը տրվել է կաշառք ստացողի պահանջով, որից հրաժարվելը ողջամտորեն կարող էր հանգեցնել իրավունքների ապօրինի սահմանափակման:**

Գտնում ենք, որ նույն հիմնավորումներով անհրաժեշտ է վերախմբագրել նաև Նախագծի հոդվածի 415-ի խրախուսական նորմը:

14. **Նախագծի 446-րդ հոդվածի մասով.**

Նախագծի 446-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հանցագործության մասին չհայտնելու համար, ընդ որում, ի տարբերություն գործող օրենքի՝ հստակեցվել է հանցագործությունների սպառիչ ցանկ, որոնց մասին իմանալ չհայտնելն առաջացնում է քրեական պատասխանատվություն:

Բանը նրանում է, որ մի շարք առանձնապես ծանր հանցագործությունների հետ մեկտեղ ցանկում տեղ են գտել նաև այնպիսի հանցագործություններ, որոնք վտանգավորությամբ էապես զիջում են, օրինակ ցեղասպանությանը, կամ ագրեսիվ պատերազմին, որոնց մասին չհայտնելն առաջացնում է նույն քրեական պատասխանատվությունն ինչ առանձնապես ծանր հանցագործության մասին իմանալ չհայտնելը:

Հետևապես, գտնում ենք, որ արարքի վտանգավորության և քրեական պատասխանատվության համաչափության ապահովման նպատակով՝ հոդվածի սանկցիան պետք է վերանայվի և դրանում ներառվեն այնպիսի պատժատեսակներ և պատժաչափեր, որպեսզի պատժի անհատականացումը խնդրահարուց չլինի:

Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոդված 378-ով ապօրինի պրեկուրսորներ իրացնելու դեպքում չհայտնելու համար քրեական պատասխանատվություն է նախատեսված, տրամաբանական կլիներ նաև քրեականացնել 377-րդ հոդվածով նախատեսված թմրամիջոցներ ապօրինի իրացնելու դեպքում չհայտնելը:

15. Նախագծի 449-րդ հոդվածի մասով.

Նախագծի հոդված 449-ի (սուտ մատնությունը) շրջանակն ընդլայնելով՝ առաջարկվում է սուտ մատնություն համարել ոչ միայն իրավասու մարմիններին հանցագործության դեպքի կամ այլ անձի կողմից հանցանք կատարելու մասին սուտ տեղեկություն տալը, այլև զանգվածային լրատվության միջոցներում նույնաբովանդակ տեղեկություն հրապարակելը: Իհարկե, հաշվի առնելով համացանցային տեղեկատվության աղբյուրների և ՋԼՄ-ների բազմազանությունը՝ խիստ ողջունելի է այս ոլորտում ևս ունենալ պաշտպանված հասարակական հարաբերություններ: Սակայն հարկ է նաև նկատի ունենալ, որ սա ուղղակիորեն կարող է հակադրվել խոսքի և մամուլի ազատությանն այն իմաստով, որ տեղեկատվությունը կարող է տպագրվել մամուլում, լրագրողի կողմից, ով առաջնորդվելով բարեխղճության կանխավարկածով տպագրում է նյութ և նրա տեղեկատվության աղբյուրը գաղտնի է: Արդյունքում պարզվում է, որ տեղեկատվությունն իրականությանը չէր համապատասխանում, իսկ լրագրողն էլ չի ցանկանում հրապարակել տեղեկատվության աղբյուրը:

Բացի այդ, հոդվածի ձևակերպումը տարընթերցումների տեղիք է տալիս այն առումով, որ պարզ չէ զանգվածային լրատվության միջոցներում հանցանքի մասին սուտ տեղեկություն տալու համար պատասխանատվության է ենթակա զանգվածային լրատվության միջոցի խմբագիրը կամ տնօրենը՝ որպես տեղեկությունը տարածող, հրապարակող, թե այն անձը, ով այդ լրատվամիջոցն օգտագործելով, օրինակ՝ դրա ուղիղ եթերում նման տեղեկություն է հրապարակում: Խնդիրն ավելի ակնառու է տպագիր մամուլի դեպքում, քանի որ արարքի օբյեկտիվ կողմը հանդիսացող գործողությունը՝ տեղեկություն հրապարակելը, փաստացի կատարվում է հենց լրատվամիջոցի կողմից:

Վերը նշված հիմնավորմամբ, գտնում ենք, որ հոդվածի դիսպոզիցիայի՝ լրատվամիջոցների վերաբերյալ ձևակերպումը պետք է վերախմբագրել այնպես, որ խոսքի և մամուլի ազատությունը չվտանգվի:

16. Նախագծի 455-456-րդ հոդվածների մասով.

Նախագծի 455-456 հոդվածներում խոսվում է փաստաբանների անվտանգության երաշխիքների մասին:

Ի տարբերություն գործող քրեական օրենսդրության, Նախագծում առավել լուրջ ուշադրության է արժանացել փաստաբանների անվտանգության, նրանց կյանքի առողջության, պատվի և արժանապատվության պաշտպանությունը:

Սակայն, դրա հետ մեկտեղ նշված կարգավորումից դուրս են մնացել փաստաբաններին վիրավորանք հասցնելու, նրանց նկատմամբ բացահայտ անհարգալից

վերաբերմունք դրսևորելու կամ զրպարտելու դեպքերը՝ կապված իրենց լիազորությունների իրականացման հետ:

Մինչդեռ՝ ինչպես ցույց է տալիս փորձը, փաստաբաններն իրենց գործունեության ընթացքում, ավելի շատ ենթարկվում են տարաբնույթ վիրավորանքների և արժանապատվությունը նսեմացնող անհարգալից վերաբերմունքի, քան բռնության և սպառնալիքների, որոնք կարող են «սառեցնող հետևանք» ունենալ նրանց աշխատանքի պատշաճ կատարման հարցում:

Վերջին շրջանում հատկապես հաճախ են դարձել փաստաբաններին՝ իրենց մասնագիտական գործունեության ընթացքում վիրավորելու, նրանց նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու և զրպարտելու դեպքերը: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ միայն քաղաքացիաիրավական պատասխանատվությունն արդյունավետ միջոց չի հանդիսանում փաստաբանի արժանապատվությունը և գործարար համբավը պաշտպանելու համար: Այս տեսանկյունից, գտնում ենք, որ քրեական պատասխանատվություն նախատեսելը պրնեցնտիվ (կանխիչ) նշանակություն կունենա:

Ինչ վերաբերում է փաստաբանին զրպարտելու արարքը քրեականացնելու առաջարկին, ապա, նախ և առաջ, կարևոր է արձանագրել, որ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածն արդեն իսկ քրեորեն հետապնդելի արարք է որակում դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելը:

Հատկանշական է, որ Նախագծի 458 հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում մարդու իրավունքների պաշտպանին վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք վճիռներում հատուկ ընդգծել է փաստաբանի մասնագիտության կենտրոնական դերն արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում: Ինչպես նշել է Եվրոպական դատարանն, առանց անհարկի խոչընդոտների իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փաստաբանների ազատությունը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչ և անհրաժեշտ նախապայման Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պահանջների իրագործման համար¹:

Հետևաբար՝ անվիճելի է, որ փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելը և զրպարտելն ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան, քանի որ այն իր բացասական ազդեցությունն է ունենում ոչ միայն փաստաբանի անձի, այլ նաև վերջինիս կողմից իրականացվող մասնագիտական գործունեության արդյունքի վրա և հանդիսանում է վերջինիս վրա ճնշում գործադրելու և նրա մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու միջոց:

Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է քրեականացնել նաև փաստաբանին վիրավորանք հասցնելու, նրա նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու և

¹ Էջին ու ուրիշներն ընդդեմ Թուրքիայի վճիռ, գանգատներ թիվ [23145/93](#) և [25091/94](#), կետ 669.

գրպարտելու դեպքերը՝ համապատասխան լրացում կատարելով Նախագծի հոդվածում 456: Ընդ որում, նշված հիմնավորումը և անհրաժեշտությունը կարող է նույն կերպ վերաբերվել նաև հոդվածում նշված մյուս սուբյեկտներին:

Այսպիսով, առաջարկում ենք Նախագծի հոդված 456-ը լրացնել և դրանում ներառել նաև դատավորին, դատախազին, քննիչին, քննչական մարմնի ղեկավարին, հետաքննության մարմնին, փաստաբանին, ներկայացուցչին, հարկադիր կատարողին կամ նշված անձանց մերձավոր ազգականին կամ մերձավորին կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողին վիրավորանք հասցնելը, նրանց նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը կամ գրպարտելը՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ զուտ դատավոր, դատախազ, քննիչ, քննչական մարմնի ղեկավար, հետաքննության մարմնին, փաստաբան, ներկայացուցիչ, հարկադիր կատարող, կամ նշված անձանց մերձավոր ազգական, կամ մերձավոր, կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող լինելու հանգամանքի հետ:

Առաջարկի ընդունմամբ փաստաբանը հնարավորություն կունենա լիարժեք իրացնել ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունները, կապահովվի փաստաբանի անխոչընդոտ աշխատանքը և իրավաբանական օգնության կարիք ունեցող անձի իրավունքների լիարժեք իրացումը:

Նշված առաջարկի համար հիմք է հանդիսացել նաև եվրոպական և ԱՊՀ մի շարք երկրների (օրինակ՝ Ֆրանսիա, Գերմանիա, Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն), ինչպես նաև ԱՄՆ փորձը:

Բացի այդ, Նախագծի հոդված 456-ում որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ է օգտագործվում շանտաժի հասկացության մեջ ներառված առաջին խումբ գործողությունները, այն է՝ հոդվածի դիսպոզիցիայում նշված անձանց և նրանց մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու սպառնալիքը՝ անհասկանալի կերպով բաց թողնելով նրանց համար անցանկալի տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու սպառնալիքի միջոցով իրականացվող հարկադրանքի եղանակները:

Կարծում ենք, որ իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու սպառնալիքի միջոցով նշված խմբի անձանց նկատմամբ կատարված ոտնձգությունն անհարկի ապաքրեականացվում է, ուստի նշված հոդվածում «նշված անձանց և նրանց մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու սպառնալիք»-ի փոխարեն կարող է օգտագործվել շանտաժ հասկացությունը՝ իր մեջ ներառելով նաև հոդվածում արդեն իսկ տեղ գտած սպառնալիքները:

17. Գտնում ենք, որ զինվորական որոշ հանցագործությունների համար նախատեսված պատժատեսակների և պատժաչափի առուվով քրեական օրենսգրքի նախագիծը (որոշ չափով կրկնելով գործող օրենսգրքում տեղ գտած թերությունները) առաջարկում է չափազանց խիստ պատիժներ, որոնք առերևույթ անհամաչափ են այդ հանցագործությունների հանրային վտանգավորությանը:

Առաջինը. Անհամաչափ են բռնությամբ զուգորդված որոշ հանցագործությունների համար նախատեսված պատիժները: Հասկանալով զինված ուժերում բռնության կիրառման և բռնության կիրառմամբ հարցեր լուծելու վտանգները և կարևորելով բանակում բռնության գործադրման դրսևորման ցանկացած դեպքի բացահայտման և մեղավորներին պատժելու կարևորությունը՝ այդուհանդերձ պետք է նշենք, որ պատիժը և պատասխանատվությունը պետք համաչափ լինի անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորությանը, և բանակում բռնությունների կանխարգելման առումով առավել կարևոր է ոչ թե կիրառվող սանկցաների խստությունը, այլ պատժի և պատասխանատվության անխուսափելիությունը:

Ավելին, բռնությամբ զուգորդված որոշ հանցագործությունների սանկցաները անհամաչափ խստացնելով, նախագծի հեղինակները դրանք արհեստականորեն դասել են ծանր հանցագործությունների շարքին, ինչի հետևանքով այդ հանցագործությունների համար նախատեսված պատժատեսակների ցանկից դուրս են մնացել զինվորական ծառայության մեջ սահմանափակում և կարճաժամկետ ազատազրկում պատժատեսակները, որոնք զինվորական հանցագործությունների դեմ պայքարի առավել գործուն միջոցներ են, քան երկարատև ազատազրկումը: Նման կարգավորման հետևանքով ոչ միայն խախտվում է դատապարտվող անձի իրավունքները՝ անհամաչափ պատժի ենթարկվելու առումով, այլ նաև պետության շահերը, քանի որ պատիժը փաստացի չի ծառայում իր նպատակներին, գործուն միջոց չի հանդիսանում՝ նոր հանցագործությունների կանխարգելման և պատժի ենթարկված անձի ուղղման առումով:

Անհամաչափություն է նկատվում նաև որոշ անզգուշությամբ կատարվող հանցագործությունների համար նախատեսված պատժատեսակների և պատժաչափի առումով:

Այսպես՝

- I. ՀՀ /նախագիծ/ քրեական օրենսգրքի 478-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը, եթե դա կատարվել է՝
 - ✓ մի խումբ անձանց կողմից,
 - ✓ սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից կամ
 - ✓ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:
- II. ՀՀ /նախագիծ/ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ստորադասի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը, եթե դա կատարվել է՝

- ✓ մի խումբ անձանց կողմից կամ
- ✓ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

III. ՀՀ քրեական օրենսգրքի 480-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ձինձառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային որևէ կանոն խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով, եթե դա կատարվել է՝ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Գտնում ենք, որ վերոգրյալ հանցագործությունների որակյալ այն հատկանիշները, որոնց առկայությունը պատժի նվազագույն շեմը բարձրացրել են երկու կամ հինգ տարի ժամկետով ազատազրկման չեն պարունակում հանրային վտանգավորության այնպիսի բարձր աստիճան, որը բոլոր դեպքերում կվկայի նման արարք կատարող անձին նվազագույնը երկու կամ հինգ տարի ազատազրկման դատապարտելու անհրաժեշտության մասին:

- ✓ Այսպես, օրինակ՝ երկու վերադաս հրամանատարներ տեղեկանալով, որ ստորադաս հրամանատարը իր ենթականերից գումար է կորզել, մինչև իրավապահ մարմիններին հայտնելը մեկական ապտակ են հասցնում ենթադրյալ հանցագործություն կատարած անձին, արդյոք այդ անձանց նկատմամբ նշանակվելիք նվազագույն պատիժը պետք է սկսվի հինգ տարի ժամկետով ազատազրկումից,
- ✓ Կամ օրինակ ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում որպես զենք հարմարեցված առարկայի գործադրմամբ բռնություն գործադրելը կամ դրա սպառնալիքը, այն դեպքերում երբ տուժողի առողջությանը էական վնաս չի պատճառվել արդյոք պետք է պատժվի հինգից տասը տարի ժամկետով ազատազրկման:

Գտնում ենք, որ նպատակահարմար է էապես իջեցնել վերոգրյալ հանցագործություններով նախատեսված պատիժների նվազագույն շեմը:

Երկրորդ. Խնդրահարույց է նաև անզգուշությամբ կատարվող զինվորական որոշ հանցագործությունների, մասնավորապես՝ նախագծի՝ 493-րդ հոդվածի 2-րդ մասով, 494-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասով, 495-րդ հոդվածի 3-րդ մասով, 496-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պատիժների նվազագույն շեմերը:

Գտնում ենք, որ վերոգրյալ հոդվածներով այն բոլոր դեպքերում երբ արարքը կատարվել է անզգուշությամբ և հետևանքը մարդկային զոհերի հետ կապված չէ պատժի նվազագույն շեմը երկու, երեք կամ չորս տարի ժամկետով ազատազրկում նախատեսելը չափազանց խիստ է:

Այսպես օրինակ, նախագծի 494-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռազմական թոչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման որևէ կանոն

խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է առողջությանը թեթև վնաս պատժվում է ազատազրկմամբ երկուսից հինգ տարի ժամկետով:

Կարծում ենք չի կարող վերոգրյալ կանոնների խախտումը անզգուշությամբ մարդու առողջությանը թեթև վնաս պատճառելու պայմաններում նման բարձր հանրային վտանգավորություն պարունակի, որ նվազագույն պատժի շեմը սկսվի երկու տարի ժամկետով ազատազրկմամբ:

Գտնում ենք, որ նպատակահարմար է էապես իջեցնել վերոգրյալ հանցագործություններով նախատեսված պատիժների նվազագույն շեմերը:

Երրորդ. Խնդրահարույց է նաև նախագծի 504-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության համար նախատեսված պատժի նվազագույն շեմը:

Նշված հոդվածի համաձայն՝ «Պետի կամ պաշտոնատար անձի կողմից կողմից իր իշխանությունը կամ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունը կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, կամ իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով իր լիազորություններից չբխող արարք կատարելը, որն առաջացրել է մարդու իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի ոտնահարում, հասարակական կարգի խախտում, հանցագործությունների կամ այլ իրավախախտումների պարտակում, առաջադրանքի խախտում կամ խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության շահերին կամ առաջացրել է համարժեք այլ հետևանքներ»՝ «Իշխանագանցությունը կամ իշխանությունը չարաշահելը», եթե դա՝

1) կատարվել են բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով, զենք կամ հատուկ միջոց օգտագործելով,

2) մի խումբ պետերի կամ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

3) անզգուշությամբ առաջացրել են մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժությունների կամ այլ ռազմական միջոցառումների խախտում կամ այլ ծանր հետևանք կամ կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում են ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով»:

Ստացվում է, որ եթե օրինակ պետը՝ իր պաշտոնական լիազորությունները չարաշահելու հետևանքով անզգուշությամբ խախտում է զորավարժությունը, ապա նրա նկատմամբ սահմանված պատժի նվազագույն շեմը սկսվում է վեցը տարի ժամկետով ազատազրկմամբ:

Գտնում ենք, որ վերոգրյալ հանցագործության 2-րդ մասով նախատեսված պատժաչափի նվազագույն շեմը՝ վեցը տարի ժամկետով ազատազրկումը չի կարող արդարացված համարվել և չի համապատասխանում նշված արարքի հանրային վտանգավորությանը:

18. Առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր հոդվածով, որի դիսպոզիցիայի առաջարկվող ձևակերպումը հետևյալն է.

«Հայիոյանքը՝ խոսքի, պատկերի, ծայնի, նշանի կամ այլ եղանակով հանրորեն հայտնի անպարկեշտ բառերի և հասկացությունների հրապարակային արտահայտումն է համացանցում կամ զանգվածային լրատվության միջոցներով՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու նպատակով»:

Առաջարկը պայմանավորված է զանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական ցանցերով այլ անձանց (այդ թվում՝ փաստաբանի) պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելու նպատակ հետապնդող հայիոյանքների կատարման դեպքերի կանխարգելման և իրավական հետապնդման արդյունավետ միջոցների ներդրման անհրաժեշտությամբ:

Իրավական պետության անքակտելի հատկանիշներից մեկը հանդիսացող արտահայտման ազատությունը պետք է իրացվի այնպես և այնպիսի սահմաններում, որպեսզի չխախտվեն այլոց իրավունքները և, մասնավորապես, պատվի և արժանապատվության անձեռնմխելիության իրավունքը, այլապես առկա կլինի արտահայտման ազատության չարաշահում:

Խոսքի և արտահայտման ազատության չարաշահման հանրային վտանգավորություն ներկայացնող դրսևորում է հայիոյանքը, որը կատարվում է հասարակության հայտնի և միջանձնային հարաբերություններով շրջանառվող ոչ ցենզուրային անպարկեշտ բառերի և արտահայտությունների միջոցով, որոնք կարող են ունենալ ինչպես խոսքային, այնպես էլ պատկերային, ծայնային և այլ դրսևորումներ: Սույն արարքի իրավական կազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ է հայիոյանքի հրապարակային բնույթն՝ առնվազն որևէ երրորդ անձի համար հայիոյանքի կատարման փաստի մասին տեղեկատվության հասանելիությունը: Սույն հանգամանքն ազդեցություն է ունենում նաև արարքի սուբյեկտիվ կողմի՝ մեղքի բնույթի և աստիճանի վրա. հրապարակային հայիոյանքը հիմնականում կատարվում է չարամտորեն՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելու և այդ փաստն այլ անձանց հասանելի դարձնելու ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ:

Հայիոյանքի բովանդակությունը և դրա հրապարակային բնույթը կրկնակի վնաս են պատճառում վերջինիս հասցեատիրոջ պատվին և արժանապատվությանը, ինչպես նաև գործարար համբավին: Ավելին՝ հայիոյանքն իր մեջ կարող է պարունակել դրա զոհի նկատմամբ շանտաժի և այլ հակաիրավական գործողությունների տարրեր: Արդյունքում իրավախախտի կողմից խոսքի ազատության իրացման չարաշահման հետևանքով այլ անձ ենթարկվում է բարոյական և հոգեբանական նսեմացման, որը կարող է ամենատարբեր անբարենպաստ հետևանքներ առաջացնել հայիոյանքի զոհի համար՝ ընդհուպ մինչև հոգեբանական խնդիրներ և ինքնավնասման դեպքեր:

Հայաստանի Հանրապետությունում հայիոյանքի հրապարակային դրսևորումներն ունեն աճի միտում: Որպես իրավունքի խախտման սույն տեսակի հարթակ հաճախակի հանդես են գալիս սոցիալական ցանցերը, զանգվածային հրապարակային միջոցառումները: Սույն իրավախախտման իրավական հետապնդման կառուցակարգերը

տվյալ դեպքում բավարար չեն, քանի որ կա՛մ երկարատև են և ունեն ընթացակարգային խրթինություններ և ֆինանսական անհարմարություններ՝ մասնավորապես, տուժողից գանձվող պետական տուրքի տեսքով (խախտված իրավունքների վերականգնման քաղաքացիադատավարական կարգ), ինչպես նաև կրում են ավելի շատ մասնավոր-իրավական բնույթ: Մինչդեռ, իրավական պետությունը հանդիսանում է հանրության բարոյականության և այլոց իրավունքների պաշտպանության երաշխավորը, որպիսի փաստն ուղղակիորեն բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից և, նախ և առաջ, դրա 1-ին անփոփոխ հոդվածի իրավակարգավորումից: Հետևաբար, հայիոյանքի վարքագծի քրեաիրավական կանխարգելումն ու հետապնդումը կարող է լինել առավել արդյունավետ գործիք՝ թե՛ տուժողի համար իրավական ընթացակարգերի առավել պարզ բնույթով և հասանելիությամբ և թե՛ պետության հարկադրական ապարատի առավել հասցեական և արդյունավետ կիրառման իմաստով՝ նպատակ ունենալով ապահովել հանրային համերաշխություն և մարդու իրավունքների նկատմամբ համընդհանուր հարգանք և պաշտպանություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ՀՀ քրեական օրենսգրքի նախագծերն ուսումնասիրելու և հնարավոր առաջարկություններ ու դիտողություններ ներկայացնելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատի կողմից ձևավորված աշխատանքային խումբ

Աշխատանքային խմբի

Համակարգող՝

Պալատի նախագահի տեղակալ, փաստաբան Հարութ Ակյունց

Անդամներ՝

- ***Փաստաբան Ահարոնյան Ռոման (արտոնագիր՝ թիվ 1289)***
- ***Փաստաբան Աղաջանյան Էդուարդ (արտոնագիր՝ թիվ 134)***
- ***Փաստաբան Գրիգորյան Նիկոլայ (արտոնագիր՝ թիվ 1713)***
- ***Փաստաբան Կոչուբան Ալեքսանդր (արտոնագիր՝ թիվ 2606)***
- ***Փաստաբան Հակոբյան Մհեր (արտոնագիր՝ թիվ 1205)***
- ***Փաստաբան Ղազարյան Արթուր (արտոնագիր՝ թիվ 439)***
- ***Փաստաբան Ղազարյան Լևոն (արտոնագիր՝ թիվ 2184)***
- ***Փաստաբան Զաղինյան Սամվել (արտոնագիր՝ թիվ 487)***
- ***Փաստաբան Սարգսյան Արսեն (արտոնագիր՝ թիվ 1090)***
- ***Փաստաբան Ֆանյան Արմինե (արտոնագիր՝ թիվ 1262)***